ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ գ. Արևաշող 1 Փ. 105, Հեռ. 0255-2-21-76

Ն ԼՄԱՀ 0131
01 ***հունիսի 2021թ.***

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ՝ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ի պատասխան Ձեր 2020 թվականի հունվարի 20 - ի թիվ 01/107.3/00404-2020 գրության և ի կատարումն ՀՀ Տարածքային կառավարման նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի 2018 թվականի մայիսի 2 - ի թիվ 01/16.2/2636-18 հանձնարարականի կից Ձեզ եմ ներկայացնում տեղեկատվություն Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 3 - ին կայանանալիք արտահերթ նիստի, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի մասին:

Կից ներկայացնում եմ նաև նիստին օրակարգում ընդգրկված ընդունվելիք որոշումների նախագծերը:

Առդիր՝ 1 թերթ և 1 էլեկտրոնային նյութ:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Արևաշող	Ավագանու արտահերթ նիստ	03.06.2021թ.	14:00	Արևաշողի համայնքապետարանի ավագանու սենյակ (գ.Արևաշող, 1 Փ. 105)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող,
Հեռ. 0255-2-21-76
էլ. Փոստ arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N __

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3 - Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արևաշող համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 3 - ի արտահերթ նիստի օրակարգը

Օրակարգ

Արևաշող համայնքի 2021թ – ի հունիսի 3 – ի արտահերթ նիստի

1. Արեվաշող համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելու մասին:
2. Հեղնար Ռաֆիկի Աղեկյանին գույքահարկի գծով հարկային արտոնություն տրամադրելու մասին:
3. Մարգարիտ Ժորայի Համբարյանին գույքահարկի գծով հարկային արտոնություն տրամադրելու մասին:
4. Համայնքում գտնվող հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու մասին:

Կողմ – 0 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող, 0255-2-21-76 arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N __

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 1 - ին մասի 21 - րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 - րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ - ի ապրիլի 12 - ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը Արևաշող համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Արևաշող համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ներքոհիշյալ հողամասերը ըստ լոտերի աճուրդ վաճառքով օտարելուն
   1) Լոտ – 1 ծածկագիր 06-021-0112-00268, 0.4 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողի գործառնական նշանակության /վկ.01042021-06-0029/ մեկնարկային գինը սահմանել 244000 /երկու հարյուր քառասունչորս հազար/ ՀՀ դրամ:
   2) Լոտ – 2 ծածկագիր 06-021-0017-0009, 0.01291 հա մակերեսով 13 Փ. 8 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի /վկ. 21052021-06-0045/ մեկնարկային գինը սահմանել 67132 /վաթսունյոթ հազար մեկ հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ:
   3) Լոտ – 3 ծածկագիր 06-021-0017-0012, 0.02031 հա մակերեսով 13 Փ. 14 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի /վկ. 21052021-06-0048/ մեկնարկային գինը սահմանել 105612 /մեկ հարյուր հինգ հազար վեց հարյուր տասներկու/ ՀՀ դրամ:
2. Համայնքի ղեկավարին մրցույթով աճուրդ-վաճառքի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասերի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները, ինչպես նաև տվյալ հողամասերի նկատմամբ սահմանափակումները (ներառյալ՝ սերվիտուտները):
3. Սահմանել՝ աճուրդի մասնակցության վճար 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, աճուրդային մրցույթի մեկ քայլի չափը՝ լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով, նախավճարի չափը սահմանել՝ լոտի մեկնարկային գնի 50%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ – 0 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող,
Հեռ. 0255-2-21-76
Էլ. Փոստ arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N __

ՀԵՂՆԱՐ ՌԱՖԻԿԻ ԱՂԵԿՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածով՝, «Հարկային օրենսգրքի» 19 – րդ հոդվածով, «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19 – ի թիվ 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Թիվ 822-Ն որոշմամբ սահմանված կարգի 8 – րդ կետով: Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի կարծիքը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հեղնար Ռաֆիկի Աղեկյանին սեփականության իրավունքով պատկանող նույն համայնքի 1 Փ. 120 հասցեում գտնվող հասարակական կենտրոնը սեփականատիրոջ մեծահոգության շնորհիվ անվճար ծառայում է համայնքի բնակիչներին, որի 274089 (երկու հարյուր յոթանասունչորս հազար ութսունինը) ՀՀ դրամ անշարժ գույքի գույքահարկի ապառքի մասին սեփականատերը չի իմացել գույքահարկի հաշվարկման հին համակարգի տեխնիկական սխալի պատճառով, ի նկատի ունենալով, որ սեփականատեր Հեղնար Ռաֆիկի Աղեկյանը պարտավորվում է ամբողջությամբ մարել ապառքը սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված և չվճարված տույժերը ներելու պարագայում ուստի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հեղնար Ռաֆիկի Աղեկյանին (հանրային ծառայության համարանիշ 7011560467, հասցեն՝ գ. Արևաշող 7 Փ. 1 Փկղ. 2 Տ) տրամադրել անշարժ գույքի գույքահարկի արտոնություն՝ ազատել Արևաշող համայնքում 1 Փ. 120 հասցեում գտնվող հասարակական կենտրոնի գույքահարկը սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված և չվճարված տույժերից 123181 (մեկ հարյուր քսաներեք հազար մեկ հարյուր ութսունմեկ) ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդ օրը:

Կողմ – 0 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող,
Հեռ. 0255-2-21-76
էլ. Փոստ arevashogh.lori@mta.gov.am

«01»«06»2021թ.

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ

ԿԱՐԾԻՔ
ՀԵՂՆԱՐ ՌԱՖԻԿԻ ԱՂԵԿՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արևաշող համայնքի ղեկավարին է դիմել նույն համայնքի բնակիչ Հեղնար Ռաֆիկի Աղեկյանը և հայտնել, որ իր անվամբ ՀՀ ԱԳԿ - ում գրանցված է Լոռու մարզի Արևաշող համայնքում 1 Փ. 120 հասցեում գտնվող հասարակական կենտրոնի շենքը: Հիշյալ անշարժ գույքը անվճար ծառայում է համայնքի բնակիչներին և ինքը տեղյալ չի եղել անշարժ գույքի գույքահարկի գծով ունեցած հարկային պարտավորությունների մասին, (անշարժ գույքի գույքահարկը չի հաշվարկվել գույքահարկի հաշվարկման հին համակարգի տեխնիկական սխալների հետևանքով) ուստի և սեփականատերը սահմանված ժամկետում չի վճարել սույն անշարժ գույքի գույքահարկը, որի հետևանքով առաջացել է գույքահարկի պարտավորություն:
Անշարժ գույքի գույքահարկի ապառքը կազմում է 274089 (երկու հարյուր յոթանասունչորս հազար ութսունինը) ՀՀ դրամ, որը սեփականատերը պարտավորվում է վճարել, սակայն հնարավորություն չունի վճարել անշարժ գույքի գույքահարկի ապառքը սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված և չվճարված տույժերը և խնդրել է ազատել անշարժ գույքի գույքահարկի ապառքը սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից:
Ելնելով վերը հիշատակվածից և հիմք ընդունելով Հեղնար Ռաֆիկի Աղեկյանի դիմումը նպատակահարմար եմ գտնում Հեղնար Ռաֆիկի Աղեկյանին տրամադրել անշարժ գույքի գույքահարկի գծով արտոնություն և ազատել վերջինիս սեփականության իրավունքով պատկանող նույն համայնքի 1 Փ. 120 հասցեում գտնվող հասարակական կենտրոնի գույքահարկը սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկված և չվճարված 123181 (մեկ հարյուր քսաներեք հազար մեկ հարյուր ութսունմեկ) ՀՀ դրամ տույժերից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող,
Հեռ. 0255-2-21-76
Էլ. Փոստ arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N __

ՄԱՐԳԱՐԻՏ ԺՈՐԱՅԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածով՝, «Հարկային օրենսգրքի» 19 – րդ հոդվածով, «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19 – ի թիվ 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Թիվ 822-Ն որոշմամբ սահմանված կարգի 8 – րդ կետով: Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի կարծիքը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարգարիտ Ժորայի Համբարյանին սեփականության իրավունքով պատկանող GAZ_24-10 մակնիշի 39SS695 պետհամարանիշի 1987թ. – ի արտադրության ավտոմեքենան սեփականատիրոջ կողմից չի շահագործվել քանի, որ վերջինս բացակայել է համայնքից և չի իմացել 130000 (մեկ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ փոխադրամիջոցների գույքահարկի ապառքի մասին, ի նկատի ունենալով, որ սեփականատեր Մարգարիտ Ժորայի Համբարյանը պարտավորվում է ամբողջությամբ մարել փոխադրամիջոցների գույքահարկի ապառքը սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված և չվճարված տույժերը ներելու պարագայում ուստի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մարգարիտ Ժորայի Համբարյանին (հանրային ծառայության համարանիշ 5101583340, հասցեն՝ գ. Արևաշող 1 Փ. 148 Տ) տրամադրել փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություն՝ ազատել GAZ 24-10 մակնիշի 39SS695 պետհամարանիշի 1987թ. – ի արտադրության ավտոմեքենայի գույքահարկը սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված և չվճարված տույժերից 60294 (վաթսուն հազար երկու հարյուր իննսունչորս) ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդ օրը:

Կողմ – 0 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն
Լոռու մարզ Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող,
Հեռ. 0255-2-21-76
էլ. Փոստ arevashogh.lori@mta.gov.am

«01»«06»2021թ.

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ

ԿԱՐԾԻՔ
ՄԱՐԳԱՐԻՏ ԺՈՐԱՅԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արևաշող համայնքի ղեկավարին է դիմել նույն համայնքի բնակիչ Մարգարիտ Ժորայի Համբարյանը և հայտնել, որ իր անվամբ գրանցված է GAZ 24-10 մակնիշի 39SS695 պետհամարանիշի 1987թ. – ի արտադրության ավտոմեքենա: Փոխադրամիջոցը երկար ժամանակ չի շահագործվել քանի, որ սեփականատերը բացակայել է հանրապետությունից և սահմանված ժամկետում չի վճարել սույն փոխադրամիջոցի գույքահարկը, որի հետևանքով առաջացել է փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորություն:
Փոխադրամիջոցի գույքահարկի ապառքը կազմում է 130000 (մեկ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, որը փոխադրամիջոցի սեփականատերը պարտավորվում է վճարել, սակայն հնարավորություն չունի վճարել փոխադրամիջոցի գույքահարկի ապառքը սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված և չվճարված տույժերը և խնդրել է ներել և ազատել փոխադրամիջոցի գույքահարկի ապառքը սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից:
Ելնելով վերը հիշատակվածից և հիմք ընդունելով Մարգարիտ Ժորայի Համբարյանի դիմումը նպատակահարմար եմ գտնում Մարգարիտ Ժորայի Համբարյանին տրամադրել փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն և ազատել վերջինիս սեփականության իրավունքով պատկանող GAZ 24-10 մակնիշի 39SS695 պետհամարանիշի 1987թ. – ի արտադրության ավտոմեքենայի գույքահարկը սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկված և չվճարված 60294 (վաթսուն հազար երկու հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ տույժերից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության,
Լոռու մարզի Արևաշող համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Արևաշող,
Հեռ. 0255-2-21-76, E maul arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 42 - րդ և 43 – րդ հոդվածներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ, գոյություն չունեն, որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր Լոռու մարզի Արևաշող համայնքում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման նպատակային նշանակության 0.01613 հա հողամասի /գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման/ նկատմամբ և այն ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9 – ի թիվ 877-Ն որոշմամբ թյուրիմացաբար չի փոխանցվել համայնքին, ուստի առաջնորդվելով ՀՀ ԿԱ ԱԳԿ նախագահի 2010 թվականի հունիսի 1 – ի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» թիվ 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 2 –րդ գլխի 5 – րդ կետով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Լոռու մարզի Արևաշող համայնքի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման նպատակային նշանակության 0.01613 հա 06-021-0017-0011 ծածկագրի տակ գրանցված հողամասի /գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման/ նկատմամբ ճանաչել համայնքի սեփականության իրավունքը և այն միացնել համայնքի հողային ֆոնդին:
2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60 – րդ հոդվածով դասվող հողամասերի ցանկում:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժնումում:

Կողմ -0 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՐՃ ՊԱՊԻԿՅԱՆ